

դապետին, որ այժմ պատրիարք եղեալ է այլադղեաց իշխանութեամբ ի վերայ Հայոց»:

Գրիգոր Կեսարացիէն ծանօթ է ինձ նաեւ հետեւեալ նամակը, գրուած էջմիածնի Միաբաններուն, 1630էն ետքը, հաւանօրէն երբ կենդանի էր զեռ Մովսէս կաթողիկոս:

Նամակին մէջ Մովսէս կաթողիկոսի առնունը չէ յիշատակուած, եւ ոչ ալ անոր մահն, կամ յաջորդի ընտրութիւնը ակնարկուած: Առանց տարակուսի «բազում անգամ գրով եւ յանդիմանելով ծածուկ եւ յայտնի ծանուցի ձեզ, թէ այդ խորթ եւ նորածեւ բանիցդ ի բաց կացէք, զի չէ դա ճշմարիտ ուղղափառաց, այլ Քաղկեդոնականացն» խօսքերը մասամբ առ Մովսէս ուղղուած մեղադրական թուղթը կը յարարերեն: Նոյն թ. 1771 ձեռագրին մէջ (թղ. 301 ա եւ յջ.) կը գտնուի երկրորդ, աւելի ընդարձակ թուղթ մ'ալ, զոր գրած է Կեսարացին առ Փիլիպպոս Կաթողիկոս, յանդիմանական շեշտով, ուր կ'ըսուի. «վասն երից իրաց գրեմ առ քեզ. նախ որ լսեցաք, թէ կամիք զհանապազորդ պատարազն խափանել. երկրորդ՝ զսեղանս խորանացն քակէք. երրորդ՝ զքառասունք առնելն արդէլէք»: Այս թղթին նոյնպէս ընդարձակ պատասխանած է Փիլիպպոս կաթողիկոս, տեղ տեղ նաեւ խիստ լեզուով:

Կը հրատարակեմ այն թուղթը այստեղ ամբողջութեամբ, իբրեւ պատմական յիշատակարան, որ կը սփռէ լոյս ժամանակակից ըմբռնումներու վրայ: Գրուածքիս մասին ակ-